

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2026

ՀՈՒԼԻՍ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1

Աշվածներից ո՞ր աշխարհագրական մշակույթի բաղադրիչ չէ:

- 1) աշխարհի աշխարհագրական պատկերը
- 2) աշխարհագրական մտածողությունը
- 3) պատմական հետազոտության մեթոդները
- 4) աշխարհագրության լեզուն

2

Քանի՞ փուլ ունի դաշտային հետազոտության մեթոդը.

- 1) 2
- 2) 3
- 3) 4
- 4) 5

3

Հորիզոնի ո՞ր կողմի ազիմուտն է 270°:

- 1) հարավային
- 2) արևելյան
- 3) հյուսիսային
- 4) արևմտյան

4

Միջին լայնությունները քարտեզի վրա պատկերելու համար առավել հաճախ ո՞ր պրոյեկցիան են կիրառում:

- 1) հասարակածային
- 2) ազիմուտային
- 3) գլանային
- 4) կոնային

5

Բնութագրումով որոշել վարկածը.

Ելակետ ընդունելով այդ վարկածը՝ գիտնականները եզրակացնում են, որ Երկրի վրա կուտակված հսկայածավալ ջուրն արտահոսել է ընդերքից, Երկրի տաքացումը՝ սկսվել կենտրոնից: Ո՞րն է այդ վարկածը:

- 1) միգամածային
- 2) երկնաքարային
- 3) պատահարային
- 4) խորքային գրավիտացիոն

6


Ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Օրվա նույն ժամը կարող է լինել միայն նույն գուգահեռականի վրա:
- 2) Միջօրեականի վրա տվյալ պահին դիտված ժամանակը կոչվում է դեկրետային ժամանակ:
- 3) Ամսաթվի փոփոխման գիծն անցնում է գլխավոր միջօրեականով:
- 4) Դելիի գոտիական ժամանակն առաջ է Երևանի գոտիական ժամանակից:

7


Նկար 1-ում n՞ր տառով է նշված հրաբխի մղանցքը:

- 1) Ա
- 2) Բ
- 3) Գ
- 4) Դ



8

Նկար 2-ում n՞ր հարթավայրն է նշված Դ տառով:




- 1) սարահարթ
- 2) բարձրավայր
- 3) ցածրավայր
- 4) դաշտավայր

9

Ո՞ր քամիներն են պատկերված նկար 3-ում:

- 1) բրիզներ
- 2) մուսսոններ
- 3) պասսատներ
- 4) լեռնահովտային քամիներ




նկար 3

10

Նկար 4-ում n ը թվով է նշված օդի ջերմաստիճանի տարեկան ընթացքի կորը բարեխառն լայնություններում:

- 1) 1
- 2) 2
- 3) 3
- 4) 4



Նկար 4

11

Համաշխարհային օվկիանոսի վերաբերյալ n ը պնդումն է ճիշտ:

- 1) Օվկիանոսի այն հատվածը, որը ներթափանցել է ցամաքի մեջ, կոչվում է նեղուց:
- 2) Առավել մեծ աղիություն ունեն հասարակածային գոտու ջրերը:
- 3) Ցունամիի առաջացման հիմնական պատճառը մշտական ուղղություն ունեցող քամիներն են:
- 4) Լուսնի ձգողական ուժի հետևանքով օրական երկու անգամ օվկիանոսի ջրի մակարդակի իջեցումը կոչվում է տեղատվություն:

12

Գետի ակունքի բացարձակ բարձրությունը 2500 մ է, գետաբերանինը՝ 1600 մ, երկարությունը՝ 150 կմ: Գետի թեքությունը կլինի.

- 1) 12 մ/կմ
- 2) 6 մ/կմ
- 3) 15 մ/կմ
- 4) 8 մ/կմ

13

Մթնոլորտի ո՞ր շերտն է ֆիլտրում ուլտրամանուշակագույն ճառագայթների մեծ մասը.

- 1) ներքնոլորտը
- 2) վերնոլորտը
- 3) օզոնի շերտը
- 4) ջերմոլորտը

14


Նշվածներից որի՞ միավորն է արտահայտվում տոկոսներով.

- 1) մթնոլորտային ճնշում
- 2) հարաբերական խոնավություն
- 3) օդի ջերմաստիճան
- 4) բացարձակ խոնավություն

15

Նկար 5-ում ո՞ր թվով է պատկերված հասարակածային խոնավ անտառների զոնան:

- 1) Ա
- 2) Բ
- 3) Գ
- 4) Դ



16

Տայգայի բնական զոնան հիմնականում ո՞ր հողերի վրա է տարածվում:

- 1) լատերիտային
- 2) կարմրագորշ
- 3) պոդզոլային
- 4) դարչնագույն

17

Քարտեզ 1-ում Բ տառով նշված կետի անունը նշված է:

- 1) Մալակկայի
- 2) Բերինգի
- 3) Ջիբլարթարի
- 4) Թորրեսի

18

Քարտեզ 1-ում Ա տառով նշված կետի անունը նշված է:

- 1) Չենայ
- 2) Սինգապուր
- 3) Ադեն
- 4) Մումբայ



Քարտեզ 1

19

Աֆրիկայի վերաբերյալ պնդումներից ո՞րն է ճիշտ:

- 1) Արևմուտքում գտնվող Կամերուն գործող հրաբուխը մայրցամաքի ամենախոնավ շրջանն է:
- 2) Կլիման ձևավորող գլխավոր գործոնը ռելիեֆն է:
- 3) Մայրցամաքի վրա ձևավորվում է մթնոլորտային ճնշման չորս մարզ՝ երկու բարձր, երկու ցածր:
- 4) Կանարյան սառը հոսանքը մեծ դեր է խաղացել Սահարա անապատի առաջացման գործում:

20

Ո՞ր գետն է երկու անգամ հատում հասարակածը:

- 1) Օրանժ
- 2) Կոնգո
- 3) Նեղոս
- 4) Նիգեր

21

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Հյուսիսային Ամերիկայի հյուսիսային մասի մակերևույթի ձևավորման վրա մեծ ազդեցություն են թողել սառցադաշտերը:
- 2) Հյուսիսային Ամերիկան Գրենլանդիայից բաժանվում է Բերինգի նեղուցով:
- 3) Հյուսիսային Ամերիկայում Միսսուրի գետը հորդանում է ձմռանը:
- 4) Հյուսիսային Ամերիկայում ամենամեծ տարածում ունի անապատների և կիսաանապատների զոնան:

22

Հյուսիսային Ամերիկայում չեն ապրում.

- 1) լաման ու նանդու ջայլամը
- 2) կարիբոն ու խոյացուլը
- 3) սպիտակ արջն ու լեմինգը
- 4) որմզդեղն ու բիզոնը

23

Ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Անդերը հարուստ է հատկապես պղնձի պաշարներով:
- 2) Բրազիլական և Գվիանական սարահարթերի հնագույն հիմքի բյուրեղային ապարները հարուստ են երկաթի և մանգանի պաշարներով:
- 3) Կարիբյան ծովի ափերին և Անդերի հյուսիսային մասերի միջլեռնային ճկվածքներում կան նավթի հարուստ պաշարներ:
- 4) Լա Պլատայի դաշտավայրը շատ հարուստ է ոսկու պաշարներով:

24

Ո՞ր գետը Հարավային Ամերիկայում չէ:

- 1) Ամազոն
- 2) Յանգզի
- 3) Պարանա
- 4) Օրինոկո

25

Ո՞ր ծովը Ավստրալիայի ափերը չի ողողում:

- 1) Բոֆորտի
- 2) Կորալյան
- 3) Թասմանի
- 4) Արաֆուրյան

26

Ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Անտարկտիկան մայրցամաք է, իսկ Անտարկտիդան՝ աշխարհամաս:
- 2) Անտարկտիդային ամենամոտ մայրցամաքը Հարավային Ամերիկան է:
- 3) Ատարկտիդան ամբողջությամբ ընկած է հարավային բևեռային շրջագծի և Հարավային բևեռի միջև:
- 4) Անտարկտիդան Հրո երկիր կոչվում է Դրեյկի լայն ու փոթորկոտ նեղուցով:

27

Քաղաքական քարտեզի ձևավորման նորագույն ժամանակաշրջանի կարևոր իրադարձությունն չէ:

- 1) ՆԱՏՕ-ի և ՎՊԵ-ի ստեղծումը
- 2) ԽՍՀՄ-ի կազմավորումը
- 3) ԱՄՆ-ի կազմավորումը
- 4) ԽՍՀՄ-ի փլուզումը

28

Ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Սահմանարկումը տեղանքում պետական սահմանի անցկացումն է, նրա աշխարհագրական կոորդինատների որոշումը, սահմանանշանների միջոցով սահմանագծի անցկացումը:
- 2) Լեռնագրական սահմանները գլխավորապես անցնում են բնական սահմաններով, հիմնականում՝ լեռնաշղթաներով ու գետերի հունով:
- 3) Երկրաչափական սահմանն ուղիղ գիծ է, որը միացնում է պետական սահմանի որոշակի կետեր՝ առանց հաշվի առնելու տեղանքի ռելիեֆային պայմանները:
- 4) Աշխարհագրական (աստղագիտական) սահմանը կարող է համընկնել այս կամ այն միջօրեականի կամ զուգահեռականի հետ:

29

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Միապետություններում երկրի օրենսդիր ու գործադիր իշխանությունների գործունեությունը ղեկավարում է նախագահը:
- 2) Միասնական պետության վարչատարածքային միավորներն ունեն որոշակի քաղաքական ինքնավարություն:
- 3) Խորհրդարանական հանրապետությունում երկրի նախագահն ընտրվում է ոչ թե անմիջապես ժողովրդի, այլ խորհրդարանի կողմից:
- 4) Աշխարհի երկրների ճնշող մեծամասնության վարչատարածքային կառուցվածքը դաշնային է:

30

Ընտրել պետությունների ճիշտ շարքն՝ ըստ դրանց տարածքի մակերեսի աճման հաջորդականության.

- 1) Բրազիլիա, Ավստրալիա, Սուդան, Ղազախստան
- 2) ԱՄՆ, Չինաստան, Կանադա, Ռուսաստան
- 3) Ավտրալիա, Հնդկաստան, Բրազիլիա, Կանադա
- 4) Կանադա, Չինաստան, ԱՄՆ, Բրազիլիա

31

Ո՞ր երկիրն ունի 100 մլն-ից պակաս բնակիչ

- 1) Պակիստան
- 2) Ֆրանսիա
- 3) Հնդկաստան
- 4) Ճապոնիա

32

Բնակչության շարժի հետևանքով ներգաղթողների ու արտագաղթողների տարբերությունը կոչվում է.

- 1) բնակչության կազմ
- 2) բնակչության բնական աճ
- 3) բնակչության վերարադրություն
- 4) բնակչության մեխանիկական շարժ

33

Կյանքի միջին տևողությունը առավելապես պայմանավորված չէ.

- 1) բնակչության ցածր կենսամակարդակով
- 2) բուժսպասարկման մակարդակով
- 3) ուրբանիզացիայի մակարդակով
- 4) բարձր մահացությամբ

34

Հնդեվրոպական լեզվաընտանիքի լեզվախումբ է.

- 1) չինականը
- 2) թուրքականը
- 3) սեմականը
- 4) գերմանականը

35

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Աէկ-ներն ապահովում են աշխարհում արտադրվող էլեկտրաէներգիայի կեսից ավելին:
- 2) Ծանր գունավոր մետաղների ձուլումը կողմնորոշվում է դեպի հումքի բազաները:
- 3) Պողպատի ձուլման ձեռնարկությունները կառուցվում են գիտական կենտրոնների մոտ:
- 4) Ջրաէլեկտրակայանները հիմնականում կառուցվում են հարթավայրային գետերի վրա:

36

Նյութական արտադրության ո՞ր ճյուղն է առավել նյութատար ու տեղաբաշված է հանքի մոտ:

- 1) վառելիքի արդյունահանում
- 2) էլեկտրաէներգետիկա
- 3) սննդի արդյունաբերություն
- 4) մեքենաշինություն

37

«Հանքավայր-հանքատեսակ» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Սուրգուտ-ածուխ
- 2) Մագադան-գազ
- 3) Նորիլսկ-երկաթ
- 4) Սամոտլոր-նավթ

38

Ընտրել «պետություն-մայրաքաղաք» համապատասխանությունների ճիշտ շարքը:

- | | |
|-------------|--------------|
| 1. Ուկրաինա | ա. Զագրեբ |
| 2. Բուղարիա | բ. Սոֆիա |
| 3. Խորվաթիա | գ. Բուխարեստ |
| 4. Ռումինիա | դ. Կիև |

- 1) 1-բ, 2-ա, 3-դ, 4-գ
- 2) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ա
- 3) 1-դ, 2-բ, 3-ա, 4- գ
- 4) 1-դ, 2-գ, 3-բ, 4-ա

39

Կենտրոնական Ասիայի տրված պետություններից ո՞րն ունի ելք դեպի Կասպից ծով:

- 1) Ուզբեկստան
- 2) Տաջիկստան
- 3) Ղազախստան
- 4) Ղրղզստան

40

«Մշակարույս-մշակող առաջատար երկիր» գույգերից ընտրել ճիշտը:

- 1) գետնանուշ-Թունիս
- 2) մանիոկ-Նիգերիա
- 3) սուրճ-Մարոկկո
- 4) կակաո-Ալժիր

41

Ո՞ր կղզեխումբն է գտնվում Օվկիանիայում:

- 1) Ֆիլիպիններ
- 2) Միկրոնեզիա
- 3) Ճապոնական
- 4) Կուրիլյան

42


ԱՄՆ-ի ո՞ր քաղաքն է գտնվում Խաղաղ օվկիանոսի ափին:

- 1) Լոս Անջելես
- 2) Դեթրոյթ
- 3) Նյու Յորք
- 4) Հյուսթոն

43

Լատինական Ամերիկայում խոշոր եղջերավոր անասնապահության զարգացմամբ ո՞ր երկիրն է առաջատար:

- 1) Պարագվայ
- 2) Արգենտինա
- 3) Ուրուգվայ
- 4) Վենեսուելա



քարտեզ 2

44 Քարտեզ 2-ում Մարտունի քաղաքը ո՞ր տարածվ է նշված.

- 1) Է
- 2) Բ
- 3) Դ
- 4) Ը

45 Քարտեզ 2-ում Կոտայքի մարզը ո՞ր տարածվ է նշված.

- 1) Զ
- 2) Ա
- 3) Գ
- 4) Ե

46 Լեռնագրական ո՞ր մարզը Միջնաշխարհի մեջ չի մտնում.

- 1) Զագրոսի լեռներ
- 2) Հայկական հրաբխային բարձրավանդակ
- 3) Ներքին Տավրոս
- 4) Միջլեռնային գոգավորություններ

47

ՀՀ Լոռու մարզի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Բնակչության թվաքանակով զիջում է միայն Սյունիքի մարզին:
- 2) Քաղաքների թվով հանրապետությունում առաջինն է՝ ութ քաղաք:
- 3) Ամենացածրադիր քաղաքը Վանաձորն է:
- 4) Ամենավոքր քաղաքը Տաշիրն է:

48

Ո՞ր քաղաքներն են գտնվում Սյունիքի մարզում:

- 1) Մարտունի և Վարդենիս
- 2) Սևան և Գավառ
- 3) Գյումրի և Վանաձոր
- 4) Սիսիան և Գորիս

49

Գեղարքունիքի մարզի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Հողածածկույթում շատ են կիսաանապատային գորշ հողերը:
- 2) Հարավում տարածվում են աղուտներ:
- 3) Հողաբուսական ծածկույթը չի ենթարկվում վերընթաց գոտիականության:
- 4) Հողածածկույթում տիրապետում են լեռնային սևահողերը:

50

Նշվածներից ո՞ր լեռնագագաթն է ամենաբարձրը Արցախի լեռնաշղթայում:

- 1) Գոմշասար
- 2) Մայմեխ
- 3) Քաջաթաղ
- 4) Մեծ Քիրս

51

Բնական և մարդածին այն օբյեկտները, որոնք ունեն եզակիություն, պատմական կամ գեղարվեստական արժեք, գեղագիտական գրավչություն, առողջարարական-կազդուրիչ նշանակություն և կարող են օգտագործվել հանգստի ու զբոսաշրջության կազմակերպման համար, կոչվում են.

- 1) հողային ռեսուրսներ
- 2) ռեկրեացիոն ռեսուրսներ
- 3) հանքային ռեսուրսներ
- 4) կենսաբանական ռեսուրսներ

52

Երկրի նավթի հետախուզված պաշարները կազմում են մոտ 24 մլն մ³, իսկ բնակչության թիվը՝ 3 մլն մարդ: Որքա՞ն կկազմի ռեսուրսաապահովվածությունը 1 բնակչի հաշվով:

- 1) 5 մ³/մարդ
- 2) 6 մ³/մարդ
- 3) 7 մ³/մարդ
- 4) 8 մ³/մարդ

53

Շրջակա միջավայրի վրա առավել շատ բացասական ազդեցություն է թողնում.

- 1) կարի արտադրությունը
- 2) սարքաշինությունը
- 3) կոնյակի արտադրությունը
- 4) ալյումինաձուլությունը

54

Կենդանիների պահպանության միջոցառում է.

- 1) արոտաշրջանառությունը
- 2) ճահիճների և ճահճակալած հողերի չորացումը
- 3) կլիմայավարժեցումը
- 4) առաջավոր ագրոտեխնիկայի կիրառումը

55

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Ջերմոցային էֆեկտը պայմանավորված է մթնոլորտում ջրային գոլորշու և ածխաթթու գազի քանակի ավելացմամբ:
- 2) Օդում մեծ քանակությամբ փոշու առկայության պատճառով խոշոր քաղաքներում օդի ջերմաստիճանն ավելի ցածր է, քան դրանցից դուրս:
- 3) Թթվային անձրևների առաջացման միակ պատճառը Արեգակի ուլտրամանուշակագույն ճառագայթներն են:
- 4) Օզոնային շերտի քայքայումը բնորոշ է միայն Բարեխառն գոտուն:

56

Տրված են աշխարհի նշանավոր լճեր: Նշել մնացորդային ծագում ունեցող լճերը.

- | | |
|--------------|-------------------|
| 1) Կասպից | 5) Մեծ ստրուկների |
| 2) Իսիկ Կուլ | 6) Մեոյալ |
| 3) Վենեթն | 7) Մեծ արջի |
| 4) Մեծ աղի | 8) Արալյան |

57

Գրել այն երկրների համարները, որոնք ելք ունեն դեպի ծով.

- | | |
|------------|-------------|
| 1) Եգիպտոս | 5) Պարագվայ |
| 2) Չադ | 6) Մեքսիկա |
| 3) Պերու | 7) Ավստրիա |
| 4) Չեխիա | 8) Լիբանան |

58

Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են ձկնային տնտեսությունների զարգացվածությամբ.

- | | |
|--------------|--------------|
| 1) Չինաստան | 5) Ինդոնեզիա |
| 2) Գերմանիա | 6) Ուկրաինա |
| 3) Հնդկաստան | 7) Լեհաստան |
| 4) Պերու | 8) Բոլիվիա |

59

Գրել այն երկրների համարները, որոնք գտնվում են Լատինական Ամերիկայում:

- | | |
|--------------|--------------|
| 1) Արգենտինա | 5) Կոլումբիա |
| 2) Ճապոնիա | 6) Իտալիա |
| 3) Նիգերիա | 7) Ֆրանսիա |
| 4) Էկվադոր | 8) Չիլի |

60

Գրել այն երկրների համարները, որոնք ԵՄ կազմում են.

- | | |
|--------------|-------------|
| 1) Հունաստան | 5) Թուրքիա |
| 2) Բուլղարիա | 6) Գերմանիա |
| 3) Ավստրալիա | 7) Իրաք |
| 4) Դանիա | 8) Բրազիլիա |

61

Գրել այն ջրեկների համարները, որոնք մտնում են Որոտանի կասկադի մեջ.

- | | |
|-------------|------------|
| 1) Քանաքեռի | 5) Այրումի |
| 2) Տաթևի | 6) Սևանի |
| 3) Արգելի | 7) Արզնիի |
| 4) Երևանի | 8) Շամբի |

62

Արաքսի ձախակողմյան տրված վտակների համարները դասավորել հյուսիսից հարավ ուղղությամբ:

- 1) Հրազդան
- 2) Ախուրյան
- 3) Արփա

63

ՀՀ տրված լճերի համարները դասավորել արևմուտքից արևելք ուղղությամբ.

- 1) Քարի
- 2) Արփի
- 3) Սև

(64-65). Աշտարակ քաղաքում օրվա ընթացքում չափել են օդի ջերմաստիճանը և ստացել են -1° , -4° , -6° , -2° , $+7^{\circ}$, $+16^{\circ}$, $+10^{\circ}$, $+4^{\circ}$ ցուցանիշները:

64 Որոշել օդի ջերմաստիճանի տատանման օրական լայնույթը (ամպլիտուդ):

65 Որոշել օդի օրական միջին ջերմաստիճանը:

66 Վայրի աշխարհագրական կոորդինատներն են՝ հս. լ. $45^{\circ}30'$ և արմ. ե. 80° : Որոշել Արեգակի ճառագայթների անկման անկյունը դեկտեմբերի 22-ի կեսօրին:

67

Որոշել միևնույն միջօրեականի վրա գտնվող երկու կետերի միջև հեռավորությունը (կմ-ով), եթե դրանցից մեկը հվ. լ. 17° -ի վրա է, իսկ մյուսը՝ հվ. լ. 36° -ի:

68

Երկրի բնակչության թիվը 2,8 մլն մարդ է, բնակչության միջին խտությունը՝ 70 մարդ/կմ²: Որքա՞ն է երկրի տարածքի մակերեսը:

69

Ֆրանսիայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) ՀՆԱ-ի մեծությամբ առաջինն է Արևմտյան Եվրոպա տարածաշրջանում:
- 2) Տնտեսությունը զարգացման հետինդուստրիալ փուլում է:
- 3) Հարուստ է նավթի պաշարներով:
- 4) Էլեկտրաէներգիայի մեծ մասը բաժին է ընկնում աէկներին:
- 5) Արդյունաբերության առաջատար ճյուղերից է թեթև արդյունաբերությունը:
- 6) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը անասնապահությունն է:

70

ՀՀ Տավուշի մարզի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) ՀՀ խաղողագործական չորս շրջաններից մեկն է:
- 2) Խոզաբուծությունը թույլ է զարգացած:
- 3) Թեթև արդյունաբերության ենթաճյուղերից առավել զարգացած է տեքստիլը:
- 4) ՀՀ փայտամշակման փայտամշակման խոշորագույն կոմբինատը Իջևանում է:
- 5) ՀՀ-ում ծխախոտի մշակության գլխավոր շրջաններից է:
- 6) Մարզի ընդերքում կան մարմարի, բենթոնիտային կավի և ածխի պաշարներ: